Հավելված 1

Հաստատում եմ՝ _____ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«_01_» _____ 2024թ.

Կ.Տ.

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանումը հիմնադրամի արդյունավետ գործունեությունն ապահովող գործընթացներից է: Այն իրենից ներկայացնում է քանակական և որակական տվյալների հավաքագրում և բարելավման գործընթացների կազմակերպում:

Հիմնադրամի ներքին շահակիցներ են հանդիսանում հիմնադրամի սովորողներն ու դասախոսական կազմը:

Հիմնադրամի արտաքին շահակիցներն են դիմորդները, շրջանավարտները, գործատուները և այլն:

Կարիքների վերհանման գործընթացն իրենից ենթադրում է հարցումների իրականացում, SWOT վերլուծությունների անցկացում, ֆոկուս-խմբային հանդիպումների կազմակերպում, գնահատում:

Կարիքների վերհանման գործընթացներն իրականացնելիս հաշվի են առնվում, մասնավորապես, ընդհանուր կրթական միջավայրը, կառավարման համակարգը, ռեսուրսները և այլն:

1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

1.1 Հիմնադրամի սովորողների կարիքների վերհանումն իրականացվում է մի քանի ուղղություններով.

- Կարիքների վերհանում վարչական կազմի կողմից:
- Կարիքների վերհանում դասախոսական կազմի կողմից:
- Կարիքների վերհանում հիմնադրամում տարբեր մասնագիտություններ ուսանող սովորողների կողմից:
- Կարիքների վերհանում ուսխորհրդի կողմից:
- Կարիքների վերհանում կարիերայի կենտրոնի կողմից:
- Կարիքների վերհանում կրթության որակի ապահովման պատասխանատուի կողմից:
- Կարիքների վերհանում գործատուների կողմից:

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

2.1 Դասախոսական կազմի կարիքների վերհանումը ևս իրականացվում է մի քանի ուղղություններով.

- կարիքների վերհանում վարչական կազմի կողմից,
- կարիքների վերհանում հանրակրթական և հումանիտար առարկաների գծով դասախոսների կողմից,
- կարիքների վերհանում տարբեր մասնագիտությունների գծով դասավանդողների կողմից:

3. ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

3.1 Դիմորդների կարիքների վերհանման նպատակով յուրաքանչյուր տարի Հիմնադրամը կազմակերպում է հանդիպումներ դիմորդների հետ, իրականացնում է .

- մասնագիտական կողմնորոշման այցեր Երևանի և մարզերի մի շարք դպրոցներ,
- բաց դռների օրեր բոլոր մասնագիտությունների գծով դիմորդների համար,
- վարպետաց դասեր,
- թվային գործիքների կիրառմամբ տեղեկատվական նյութերի տարածման միջոցով կարիքների վերհանում :

4. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

4.1 Շրջանավարտների կարիքների վերհանման գործընթացներն իրականացվում են հիմնադրամի կարիերայի կենտրոնի կողմից :
4.2 Կարիերայի կենտրոնի պատասխանատուն կազմում և վարում է Հիմնադրամի շրջանավարտների բազան :
4.3 Կարիերայի կենտրոնի պատասխանատուն վարում է ՍԵՊՖԱ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ֆեյսբուքյան էջը , որտեղ տեղակայվում են տարբեր մասնագիտությունների գծով թափուր աշխատանքների հայտարարություններ:
4.4 Կարիերայի կենտրոնի պատասխանատուն իրականացնում է պարբերական հանդիպումներ Հիմնադրամի շրջանավարտների հետ:
4.5 Կարիերայի կենտրոնի պատասխանատուն վերհանված կարիքների հիման վրա կապ է հաստատում գործատուների հետ:

5. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

5.1 Հիմնադրամը սերտորեն համագործակցում է գործատուների հետ:
5.2 Ավարտական պետական քննությունների հանձնաժողովներում ապահովվում է Գործատուների ներգրավվածությունը:
5.3 Ավարտական քննությունների ավարտին հանձնաժողովի անդամ գործատուները կազմում և ներկայացնում են հաշվետվություններ քննությունների ընթացքի և արդյունքների մասին:
5.4 Ըստ անհրաժեշտության Հիմնադրամը գործատուներին ներգրավում է մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացներում:
5.5 Հիմնադրամը կազմակերպում է ուսանողների մասնագիտական այցեր ձեռնարկություններ:
5.6 Կարիքների վերհանման գործընթացներին հաջորդում են ֆոկուս-խմբային հանդիպումներ, քննարկումներ, վերլուծություններ, որի արդյունքում կազմվում է գործողությունների պլան հետագա բարելավման գործընթացներն իրականացնելու նպատակով:

Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից :